

Դ Ի Տ Ա Կ

Բ Ի Ի Զ Ա Ն Դ Ե Ա Ն

Դ Ի Ն Դ Ի Ո Յ

Ը Ն Կ Ե Ի Ո Ի Թ Ե Ա Ն Ա Բ Շ Ա Բ Ո Ի Ն Ե Ա Յ



1814.

1. 3. 5. 7. 9. 11. 13. 15. ՀՈԿՏԵՄԲԵՐ:

Գ Ե Ի Մ Ա Ն Ի Ա.

Վ Ի Է Ն Ա . 24 Ս Ե Կ Գ Ե Ժ Ե Ե Ի :

Սեպտեմբերի 22ին, առաւօտեան սահալ թը 10ին Նեմցէին կայսրը Վիեննայէն ճամբայ ելաւ ու գնաց լեռնային Զէմպրուն Վուլթեմպեռի թիւրին . Զեմպրունին մէջ աս թագաւորները մէկըմէկ բարեւելն ետեւ՝ ըրին մէկտեղ նախաձաշիկմը, ու ճամբայ ելան Վիեննա գալու . Նեմցէին կայսրը իրեն առաջալին մէջը նստեցուց ըզ. Վուլթեմպեռի թագաւորը . երբոր սկսան երթալն անտեղի ամրոցէն նետեցին 101 թօի 'ի պատիւ թագաւորներուն : Վիեննա մտնալու ատեն բոլոր քաղքի պահապան զօրքը հանդերձ ուրիշ խումբերով զինուորած զարդարված շարվերէին ամմէն ճամբաներուն մէջ պատերազմի կարգով՝ մինչև ան պալատին առջև ուրտեղ բնակէր պիտոր Վուլթեմպեռի թագաւորը, և առապաները անցնելով աս զօրքերուն մէջէն եկան մտան պալատը :

Նոյն օրը եկաւ Վիեննա նաև Պեռնարտօթ Զլէտին թագաւորը : Ասոնցմէ զատ եկան ու կուգանկոր մէկդիէն ուրիշ երևելի Բրինժեբէններ, Ճէնէռաւներ, Տուգաններ :

26ին :

Արովհետև Մօրավիայի ճամբուն մէջը դրեր

էին մէկ թօիճիներու գունդմը իրենց թօիերովը խապար տալու համար Աղեքսանդր Մոսկովի կայսեր հոնտեղմանքը հասնիլը . անոր հմր սեպտեմբերի 25ին առաւօտեան դէմ թօիերով խապար տըլին թէ Աղեքսանդր կայսրը հասաւ Պրունն, և սահալթը 11ին մօտերը նորէն խապար տըլին նոյն թօիերը թէ հասաւ Վոյսբերուֆ . աս քաղքին մէջը կըսպասէրկոր Պաուլին թագաւորը, ուստի կայսրը հոնտեղը հասնելունպէս մէկէն լեռնային գնաց ու տեսնելորեցաւ կայսեր հետը :

Նեմցէին կայսրը իմանալունպէս թէ մօտեցերին իրեն միսաֆիրները՝ մէկէն ճամբայ ելաւ Վիեննայէն իրեն եղբայրներովը ու երևելի Ճէնէռաւներով, ու լեռնային գնացաւ թագաւորներուն . շուտմը Վիեննայի պահապան գունդը հանդերձ ուրիշ զինուորական խումբերով, նաև Մաճառի աղնուականաց պահապան խումբը հագված զարդարված շարվեցան կարգաւորվեցան պատերազմի կարգով . ան ճամբաներուն մէջ ուսկից անցնէին պիտոր տա երևելի թագաւորները : Թագաւորները մէկըմէկու առատ եկան թապօր գետին կամորջէն անդին ամմէնալ ձիու վիճեծած . Նեմցէին կայսրը առին օրթան, աջ կողմը կեցաւ Պաուլին թագաւորը, ձախ կողմը անցաւ Աղեքսանդր կայսրը, և այսպիսի սկսան գալ դէպ 'ի Վիեննա .

նա . երբոր հասան իսաճերձէլ բոլոր զօրքը շարեցին առջինին . Ըմարդ ձէմպէտկի ըսված ձիււորները ճամբայ կը բանային կոր , ասոնց էտէն կերթարկոր 18 պաղդայիօն կռանա թիւո ըսված զօրքերը , ասոնց էտէն ալ կերթարկոր գունդ գունդ հետեւալ զօրքեր , էտէնուն երեւելի ճէնէնալներ փաղաւոր հագված զարդարված , աս զօրքերուն ետէն կուգային կոր թաղաւորները որ պատերէին զասոնք չորս կողմէն կայսերական պահապան գունդին զօրքերը : Այսպիսի ալայով քաղաք մը տնայլը քչեց մէկ սահաթէն աւելի և նոյն միջոցին բոլոր Առէննայի պատնէշներէն նետեցին 1000 թօլի 'ի պատիւ թաղաւորներուն :

Որովհետեւ նոյն օրը մէկ դեղեցիկ ու պալ ծառ հաւաքներ' անոր համար անթիւ ան համար ժողովուրդը լըցունէրէին ան ճամբայ ներուն մէջ ուսկից կանցնէին կոր թագաւորները . իսկ տուններուն պատահաններուն վրայ դիզունէրէին խնձախնձ ամմէն տեսակ հասակէ , և ձայներնին բարձրացուցած կը գունացնէին կոր օդը կեցցէ կանչելով և շնահաւորելով երջանիկ միաբանութիւն իրեք երեւելի թաղաւորներուն . Եւրոպայի ազատութիւն համար :

Թաղաւորները երբոր իրենց բնակելու տարայներուն առջևը հասաննէ , թգլորական պահապանաց գունդը բարեկեցին թագաւորները , և ուրիշներնալ կեցցէ կանչելով , մտան ասոնք իւրաքանչիւրը իրենց սարայներուն մէջ' ընկերակցութիւն երեւելի թագաւորական իշխանազուններու հետ :

Աղբքսանդր կայսեր հետը եկերէին Օսմանով գլխաւոր ձէնէնալը . տեղակալ ձէնէնալները Բրինջիբէ Լայօնաթի . Բրինջիբէ Թրոնպիէթի . թօնթէ Օսթրիլաթի . թօնթէ Քիլէրիլաթի . Պրօսի Բրանքաթիլ ու Քիլաթիլ զօրապետները . Այլիկ հիմակվան տէրութիւն խորհրդականներէն մէկը . կայսեր էն գլխաւոր բժիշկը . Մալխաէկէն ու ներքին առնադպիրը տէրութիւն . Տանիլիլաթի կայսերական պահապան գունդին էն գլխաւոր զօրապետը :

Պոուշի Թգլորին հետը եկերէին , Սաին Ալիբէնէնիլի Պոուշի տէրութիւն վեպիրը . իսկով թագաւորին արտոնապետը Իմադաթը . Քիլէրիլաթի տեղակալ ձէնէնալը , երկուք ալ ուրիշ տեղակալ զօրապետ . ասոնցմէ զատ թիւիկ զօրապետը . Սիլիկ Ալպրէպի , Տոնէր թագաւորական խորհրդականները , երկու զնուորական գունդի զբաղներներով . ու մէկ զբաղներմընալ բաղաբական ատեանին . Ալիպիլ էն գլխաւոր ձէնաճը . Սիլիպի բօստային գլխաւորը իրեն տակի պաշտօնալ

տէրներով' հոգ տանելու համար թաղաւորին ճամբորդութիւն հարկաւոր բաները :

Հիսուսայի Գերմանիոյ գաղէթաներուն մէջուն մէջը էար աս հեթանալ գիթելիքը' որուն համառօտութիւն է այսպէս :

Ըվկոսթօ Ֆետերիքօ , Սաքսոնիային թագաւորը իրեն թագուհիով ու աղջկովը մինչև հիմայ տահա կեցեր է Պէտլին . շատ մեծ փառաքով կը պատենկոր իրեն հաւատարիմ ժողովուրդները' որ մէկ սահաթմը առաջ դառնայ դայ իրեն իշխանութիւն ամբողջ գերէմ իրեն ըրած բարիքը իր ժողովուրդեանը վրայ մեծ ու անմոռնալ է : Աս թագաւորը երբոր 1768 առաւ աս տէրութիւն իշխանութիւնէ' մեծ վտանգի մէջ էր դայ ըլլալու բոլոր տէրութիւն , ինքը' իր խոհէմ ու խելացի կառավարութիւն վճարեց տէրութիւն պարտքին գրէթէ մեծ մասը . ծաղկեցուց Սաքսոնիացիներուն մէջ , այդեղործութիւն , արհեստը , վաճառականութիւն . իրեն ջանքովը ու սիրտ տալով գըտնրվեցան նոր արհեստներ ու գիտութիւններ . իրեն իմաստուն ճարտարութիւն բացաւ աղբիւրները աղգային յաջողուն ու բարեբախտուն . և իր օրը միշտ յաղթօղ էր արդարունը , իրաւոր քիչ քաղաքներ կային նոյն ատենները որ Սաքսոնիացիներուն չափ երջանկութիւն մէջը ըլլային , և այնչափ բաղաբականութիւն կրթված ըլլային . արդարութիւն կրնանք ըսել թէ էր էն խելացի թագաւորներէն մէկը' որ կը թագաւորէին կոր մեր դարերուն մէջ :

Ան չարագործ էշլը վերջի ատեններուս որ բոլոր Եւրոպայի բլթները տակնուվրայ ըրաւ , իր ազականօղ ատմանը շարժեց ու հասաւ աս երջանկուն մէջ' երջող բաղաբանութիւն վրայ ալ . իրեն բէֆինէն նոր նոր կարգադրութիւնը դնելով աս տեղերնալ խոռվութիւն ու անհանգստուն մէջ ձգեց . իրաւոր աս վերջի ատենները շատ մեղադրվեցաւ Սաքսոնիայի թագաւորը թէ միաբանեցաւ դաշնադրութիւն Ֆրանսիոյն հետ ու չեբաժնը վեցաւ անկից տէի , բայց ինչ ըրին ուրիշ տէրութիւնները , ժամանակին պարագաները տեսնալով քանզինքը մեծ տէրութիւնները պիլի դաշնադրութիւն միացան Ֆրանսիոյն հետ . երբոր պատերազմ բացաւ Ֆրանսիոյն 1812ին Մոսկովի դէմ' Ալմէնէն ու Պոուշը դաշնադրութիւն միաբանեցան Ֆրանսիոյն հետ' Մոսկովին դէմ պատերազմելու համար մէկ չափաւոր գունդովը :

Իրաւ որ 1813ին դարնան ատենները հրաւիրվեցաւ դաշնակիցներէն' որ թողու Ֆրանսիոյն ու դայ միաբանի իրենց հետը ինչպէս միաբանեցին ամմէն ուրիշ դերմանային տէն

տերութիւնները, ու կէնէ մտիկ չըդրաւ դաշնակից թագաւորներուն . բայց մեղադրելէն առաջ պէտք է մտածել թէ Սաքսոնիայի թագաւորը նոյն միջոցին ինչ վտանգաւոր ու դժուարին վիճակի մէջ էր : Երբոր Փրանսըզին անհամար դուռնը սաստիկ կտորւած Մոսկովստանէն փախանէ, անկից ետեւ բոլոր Սաքսոնիան եղաւ դէպտորոնմը զարհուրելի պատերազմներու . բոլոր Սաքսոնիայի զօրաց դուռնը կէսմը . խառնուրդէր Փրանսըզի պատերազմող խումբերուն հետը, կէս մալ խառնուրդ ուրիշ Փրանսըզի պահապան զօրքերու հետ կրպաշտպանէնկոր Փրանսըզին ամրոցները : Մոսկովները երբոր Օտէո գետէն աստիւն անցանէ՝ այնչափ զօրաւոր բանակներ չէին, և Պառլէմէնտ տահանոր ոտք ելալու պատրաստութիւններ կրտեսնարկոր, մէկու կողմէն ալ Նաբօլէօնը անթիւ անհամար զօրք կրկնէրկոր դէպ ի գերմանիա, և ինքնալ քիչ ատենէն գար պիտոր հոնտեղը, ուրեմն ինչպէս կրնար ետ կենալ Փրանսըզին, և աս պարագայները գիտնալէն ետեւ արժանի է մի մեղադրանաց . ինքը գնաց Բրաւա՝ ձարմը տեսնալու համար աս բանին, և նոյն միջոցին մէջ Նաբօլէօնը յաղթեց դաշնակիցներուն Լուդօն ու Պառլէմէնտ եղած պատերազմներուն մէջ . և այսպէս Փրանսըզը նորէն տիրապետեց բոլոր Սաքսոնիայի :

Այսպիսով պատերազմներէն ետեւ Նաբօլէօնը սերտ առաւ թէ դաշնակցաց կըյաղթէ տէր, անոր համար մեծ մեծ սպառնալիքներով խապար խրկեց Բրաւա Սաքսոնիայի թագաւորին, հէկ հէկալի թէ դառնալու իր տէրութեւ սահմանները : Թագաւորը՝ որ մէկ կերպովմը կուզէր ետ կենալ, բայց լըսելով աս ապականիչ էշխին սպառնալիքները որ բոլոր իր հպատակները վտանգի մէջ կըձըլդէր, անոր համար ձարը հատաւ, և վաղ դալով իրեն խաղաղասէր մտածմունքներէն՝ դարձաւ գնաց Տրէշտա՝ ու նորէն միացաւ Նաբօլէօնին հետը :

Աս է արդարացընող պատճառները Սաքսոնիայի թագաւորին որ կըրողորքէ դաշնակցաց, և ինչպէս որ կըկարծըվինէ՝ կարդարանայ Վիէնայի լէհանուր ժողովքին մէջ :

Քօլմիա . I Հոկտեմբեր :

Ըն գերմանիային գաւառներուն վիճակը՝ որ են Ռէնօ ու Մոսա Մօսկով գետերուն մէջը, ինչպէս որ հաստատ կերեւնայնէ՝ որոշված է որ տրվի պիտոր Պառլէմէնտ տէրութեւ, ինչպէս որ կերեցընեն Պառլէմէնտ գաղթեալները աս հեռեկալ կերպով :

Պառլէմէնտ տէրութեւ, նմանապէս ուրիշ

դաշնակից տէրութիւնները չէթէ միայն ետ առնուն պիտոր ան ժառանգութիւնները որ ունէին 1805 ու 1807 ին պատերազմներէն առաջ, այլ մեծցընեն պիտոր իրենց տէրութիւնները ան սահմաններով՝ որ կըրնան ըլլալ ամուր պատնէշմը հիւսիսային Գերմանիայի Պառլէմէնտ տէրութեւ թիւիթի մէջ եղած դաշնադրութիւններուն զօրութեւ կորսընցուց ձեռքէն ան գաւառները՝ որուն մէջ կար 5 միլիօն բնակիչ, կորսընցուց նաեւ ան մասը Լէհաստանին որ առաջ կըսվէր հարաւային Բրուսսիա և կար մէջը 2,700,000 բնակիչ . աս Լէհաստանին կըտորը ետ չիտորվի նորէն Պառլէմէնտ, ղերեմ ինչպէս Ալեքսանդր Մոսկովին կայարը խօսք տըվերէնէ՝ միացընէ պիտոր աս գաւառները Լէհաստանին հետը, ասոր տեղը տան պիտոր Պառլէմէնտ Սաքսոնիային տէրութեւ, բաց ի մէկ բանի կտոր տեղերէն՝ որ Նիմցէին տան պիտոր . ղերեմ շատ հարկաւոր է ձեւացընելու համար Պօէմիայի ղիսուորական սահմանադրութիւնները, և մէկ բանի տեղեր ալ Վիէմարի տուգայութեւ հետը :

Սաքսոնիան այսպիսի կերպով բաժնելէն ետեւ Պառլէմէնտ ձեռքը կըմընայ միայն ան տէղերը՝ որոց մէջը կայ 1,700,000 բնակիչ . և աս տեղվանքը շատ հարկաւոր է Պառլէմէնտ տէրութեւ, վս զի կըկապէ մէկզմէկու հետ Սիւզիան Մարդան ու Մակտէպուռն քաղաքը : Պառլէմէնտ տէրութեւ ընէ պիտոր մէկ սահմանմը Մէմլէին ըսկտած մինչև Լիբսիա, ու Մակտէպուռնէն մինչև Բօսիլ . աս տեղվանքը Փրանսայի կողմէն պաշտպանված է շատ ու ամուր բերդերով . աս տեղերէն ան ղին առնու պիտոր այլեայ տեղեր ալ ինչպէս Մունսթերը, Բիւլլէսը Մարբը ևն . աս տեղվանքներուն հետը կըսեալվէր նաեւ Անպաք ու Պանիէուլթը, բայց որովհետեւ կըտիրապետէ ասոնց Պալիէուայի թագաւորը և իրեն սահմանները պիտոր ամբողջ մընան, անոր համար աս քաղաքներուն տեղը կըարըվի Պառլէմէնտ Պէռլի ու Ժոլլիէրսի տուգայութիւնները :

Թէպիտ և այսչափ տեղ կառնուկոր Պառլէմէնտ բայց չի հասնիր տահա 1805 ին ունեցած քաղմութեւ, անոր համար առնու պիտոր նաեւ Լինպուռնի, Լուկսեմպուռնի տուգայութիւնները, Ագուիսքրանան և մէկ մասը Թրէվէրին որ էր կայարընտրական տուգայութիւն . աս ամմէն քաղաքները Էմտէն սկսած մինչև Բօպլէնցա, ու Բալթիկաօսայէն մինչև Լէիքին կողմը կայ 2 միլիօն բնակիչ ժողովուրդ : Մակոնցան որ հիմակվան հիմայ տիրապետերէն Պառլէմէնտ զօրքերը կը տարակուսվի թէ Պառլէմէնտ ձեռքը չիմար :

Ին-

Հինտիստանցիները առին Պուէնսու-Աերէն քաղաքը Սպանեօցիներուն ձեռքէն • աս քաղաքը սաստիկ պաշարված ըլլալով ծովու կողմէն երկու ամիսէն պէրի, ու իր ծովային ուժը տկարացած ըլլալով, հիւ մէկ տեղէ չէր կրնար օգնուիլ ինչ հասնիլ աս քաղաքին ոչ Սպանիայէն և ոչ նոյն գաւառին ներքի կողմերէն, վն զի աս քաղաքը դուրսի կողմէն պաշարված էր շատ ամրոցներով, ասոր համար մէջ եղած բնակիչները շատ մեծ նեղու լին մէջ ինկան պատճառաւ սղոճե ու պահառութե ամիսն տեսակ կերակրեղէն բանէրու • ուստի Սպանեօցիներուն զօրքը պարտաւորվեցան անձնատուր ըլլալ • Ալպիէս պաշարող Ճէնէռալին լորացը աս հետեւէ դաշնադրութե :

1. Քաղքի պահապան զօրքը դուրս ելան իրենց պատերազմական պատուովը, ու իբրեւ դերի մնան յաղթօղնէրուն ձեռքը :

2. Մասնաւոր մարդիկներու ամիսն ունեցած բաները աղատ մնան տիրութեանքնէրուն ձեռքը :

3. Հիւ մէկ անձիմը նեղու լին չեհասցըվի պատճառաւ իրեն կարծեացը ու համարման որ ունի տէրութե վրայ :

4. Նոր տուրք չեծըգլի քաղքին վն, և սո վորական տուրքնալ բաժնելու ատեն պահվի ան կամոնները որ որոշված է ուրիշ Ամբի դայի միացեալ գաւառներուն մէջ :

5. Ալիօտեթ Ճէնէռալին հրաման տրովի որ կարենայ Սէքորվեթե ըսված նաւովը դառնալ Սպանիա :

6. Թողու լին տրովի ան ամիսն զօրքերուն որ երկու կողմէն ալ փախան եկան մէկով կու, ու ղէհին տրովի երկու կողմանէ որ հաւատարմութե կատարվի աս եղած դաշնադրութիւնները :

Քաղքին մէջը կար 6 հազար զօրքէն աւելի ու 500 ալ մանր ու խոշոր թօիւր • ասոնց մէջ դատ կար անհամար զինուորական, պատերազմական, ու ծովային պաշար, որ ձեռք ձգեցին յաղթօղնէրը • ասոնց անձնատուր ըլլալովը :

— Հիւ մէկ ժամանակը չէ եղած որ այսչափ շատ ինկիրիդ ինկիրիդէռայէն գէջքի համար ցամաք ելած ըլլան : Ինչպէս որ հիսապ րբերիննէ, ան ինկիրիդները որ են Փրանսայի ու Օլանտայի մէջոնէ, ամիսնուն ըրած խաբար մէկտեղ հիսապ ընկով կը լսայ կոր օրը 40,000 ստեղծին որ կընէ մէկ միլիօն դէշէն աւելի :

Մօսքայի երեւի համալսարանը ըրաւ փառաւոր հանդէսներ Փրանսայի ու Մոսկովին մէջ եղած խաղաղութեը համար : Առաջին դրանքը աս համալսարանին, կարդաց պատմութիւն համալսարանին սկսած 1812ին յունվարէն մինչև 8 յուլիսի, և իմացուց նաեւ լին Մօսքայի կրակին ատենը որչափ բան զայ եղաւ համալսարանին մէջէն, և հիւ մայ ինչ կայ համալսարանին մէջը • դրքատունը որուն մէջը կար առաջ 20 հազար հատոր դիքի, հիմայ կայ միայն 6 հազար : Մեծա ղաբանուէ խուցը որ առաջ խիստ անուանի էր բոլոր Եւրոպայի մէջ, հիմայ կայ միայն 6 հազար կտոր մետաղ • Ֆիզիգային խուցը կայ 141 կտոր մեքենայ ֆիզիգական փորձերու • դրամադիտութե խուցը կայ 4336 հին ժամանակվան ստակ :

ԲԻԷԼԻՆՈՍԿԱՆԻ • 21 ՕԳՈՍՏՈՍԻ :

() Գոստոսի 20 ին Բիէթոսպուոկի թերսխանային մէջ ջուրը ձրգեցին երկու պէյլի նաւ, մէկուն անունը էր Ֆէլաւաթա մէկալին նաւ էր Պետրոս, իւրաքանչիւրը 110 կտոր թօի քաշող • հոնտեղը դացեր էր կայսրը բոլոր իրեն ընտանեօքը սէյր ընելու համար :

ՓՐԱՆՍԱ

Փաբէլ • 21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ :

Սէննա դետին մէջը ուսկից որ դրտան վէսթ Փալիայի թագուհիին Ճէվահիրները, կը շէ նենկոր հիմայ թախտադէրտէներ, անտեղի ջուրը ցամքեցընելու համար ուղ զի հանդըստութե կարենան փնտուել մէկալ պակաս մնացած Ճէվահիրները • մինչև հիմայ որչափ որ դըտնըվեցանէ կարծեն 1, 900, 000 Փոանքի • ինչպէս որ հիսապ եղանէ բոլոր կօրսըված Ճէվահիրներուն արժողէքը էր 2,400,000 Փոանքի : Գողերը աս ամիսն Ճէվահիրները կապոցմը ըրած ձգերէին դետին մէջը, և որովհետև 3 ամիսէն աւելի կեցաւ ջուրին մէջը, մէկ բանիմը տեղէն փըթթեր է ու ծակ բացվերէ, այսպէս ըլլալով հարկաւորապէս խելը բան մէջէն դուրս ելած կորսըված է • կի ջուրը առեր տարեր է, և կամ դետի աւաղին մէջը խընվելով կորսըվեր է • դողերէն երկու հօդի բանտը դըրվեցաւ, մէկուն անունը է Մօսպրիւլ, մէկալին ալ կալվիլ • ասոնց հետը նաեւ բնուութի կընեն կոր անոր վն որ եղաւ էն առջի գրոնօղը աս խաղնային : Աս վերի ըսած կալվիլը մարդուն վրայ կըպատմըվի աս հետեւեալ դիտելիքը : Ասկայ էր առաջ Փրանսըգի թագաւորա կան

կան պահապան ըսված խումբին ղեկավարներէ
րէն մէկը Պնաբառութիւնն առնելը, և անկից
մէկ բանիւր տարի առաջ գնաց Ինկիլէէոռա՝
բարեկամութիւն ընելու համար Քօնթէ Աւ-
թուային հետը (որ է հիմակվան Փրանսըզի
թագաւորին եղբայրը) . երբոր աս կարելի-
լէն նորէն Փարէզ դառնալու եղանէ, աս
Բրինչիբէնն ապահով ըլլալով աս մարդուն
բարեկամութիւն վրայ տրվաւ իրեն նամակներ
ու 200 հազար ալ Փռանքի՝ որ երթայ բաժ-
նէ թէւորին բարեկամներուն, որ շատ մեծ
կարօտութե մէջ էին: Աս չարագործ մարդը
փոխանակ իրեն յանձնըված բանը հաւա-
տարութիւն կատարելու թողութեը տարաւ
տրվաւ Փարիզու բաղաքական կառավարուե-
տեանին, և ստակնալ տարաւ յանձնեց Պո-
նաբառութիւն ձեռքը՝ ամսին բան տեղնիտե-
ղը պատմելով:

Պնաբառութիւնն շատ հազ ընելով ասոր
բանեցուցած վարպետութիւնը, բոլոր բե-
րած ըստակը անոր ընծայեց, և բաց ա-
կից կապեց ասոր ամար 3 հազար Փռանքի
կէլի, և խոստացաւ ասոր թէ մեծ պաշտօ-
նի պիտոր հասցընէ: Աս գործքերէն ետե-
քիմը ժամանակ վրայ անցանէ՝ Պնաբառ-
ութիւնն ղտսիկայ մէկ ծածուկ յանձնարարութեմը
Վիեննա խրկեց՝ ուրտեղ նորէն առաւ պատ-
ւոյ անունը թէւորական պահապան գուն-
դին: Աս կարելիլէն Պնաբառութիւնն այս-
չափ բարիք տեսնալէն ետեւ, մարտի 31 ին
1814 առաջինը ինքը եղաւ կործանելու Պո-
նաբառութիւնն արձանը՝ որ դրոված էր Վէն-
նոմէ ըսված հրապարակին մէջ. և մէկ բա-
նիմը օր անցնէլէն ետեւ եղաւ առաջակապետ
ու բանտը դրովեցաւ: — Լոռա Վէլլինկ-
թօնը՝ որ հիմայ Ինկիլէի տերութե էլ չինէ
Փրանսըզի թէւորին բովը, հրամանաւ տե-
րութեան գնեց Պորկէզի պալատը Փարէզին
մէջ 36 հազար Ստէնլինով. աս պալատը ըն-
ծայեց որ միշտ ըլլայ սարայր ան էլ չինէ-
րուն որ Ինկիլէէոռան կըխրկէ Փրանսայի
թագաւորին բովը: — Բալէրմօէ եկած
թուղթերը հաստատ կըպատմենկոր թէ Սի-
կիլիայի թագաւորը պիտոր Թրէստ գայ և
անկից երթայ պիտոր Վիեննա՝ մըտնալու
համար հոստեղը ըլլալու իշխանութե ժողովքին
մէջ. և ինչպէս որ հաստատ կերկնայկոր
Փերսիանատո չըրը հաստատուն կենայ պի-
տոր իրեն ժառանգութե իրաւունքին վրայ,
և պիտոր չի հրաժարի Նաբօիի տերութիւնն:
— Մալթիներուն ասպետները կառնկոր
դաշնակից թագաւորներէն իրենց կղզին
(ի՞ Մալթայի) անկախ ժառանգութեմը կմ-
թէ չին ուղիք տանէ ան կղզին՝ անոր տե-
ղը տան եօթը Յոնիական կղզիները (ի՞ եօթ

ատայարը) . և ինչպէս որ կերկնայնէ, աս
Մալթիզ ասպետներուն ծառայութեմը՝ որ
ըրին 700 տարիէն պէրի բրիտանիէից աղբին
չիմոցըվըր հիշ մէկ տէրուէ մը և կըկատար-
վի իրենց խնդրովածը, զերեմ աս ասպե-
տութեմը դարդարված պապկիւրէ երեւի ե-
րեւի Եւրոպայի ազգատոհմներուն անու-
նով. ասոնց հաւատարմութե ու կրօնքութե
թիւր եղերէ միշտ ապաւէն ողորմելի ու թը-
ռաւ մարդիկներուն և հաստատութե կրօ-
նին ու տէրութեց:

ԶԱՒՅՅԵՌԻ.

Արտաւ. 4 Հոկտեմբեր:

Ընտանունով երեւի Չվիցցեուցի հե-
ղինակին մէկը առաջարկեց դաշնակից տէ-
րութեց՝ որ տընկըվի յիշատակարանմը Լիբ-
սիայի պատերազմին տեղը. և օրինակը իր ա-
ռաջարկութե էր այսպէս:

„ Կառաջարկեմ մէկ բանմը՝ որ հէմ պարզ
„ է, ու հէմ խօսայ է շինելը՝ հրաման տրովի
„ մէկ բանի հազար ղեկավարներու կմ անտե-
„ ղի քաղաքայիններուն, որ տնկեն ան լաւ
„ ձակ դաշտին օրթան՝ ուրտեղ եղաւ էն
„ վերջի անուանի պատերազմը ջարդելու
„ համար Եւրոպայի բռնաւորին զօրութեմը
„ տնկելու մէկ հողէ բլուրմը՝ որուն բարձ-
„ րութեմը ըլլայ 200 ոտք. աս բլուրին վրայ
„ շինվի մեծակե բարէ խարխիւներ, ասոնց
„ վրայ տընկըվի մէկ մեծ երկաթէ խաչը՝
„ որուն վրայ գրովի յիշատակը փրկութեան
„ տարւոյն, և անունները՝ հիմակվան նոր
„ ծնած աշխարհքին մէջ տիրապետողներուն
„ խաչին վրայ դրովի մէկ մեծ դռնամը ոս-
„ կեղծած, և ըլլայ այնչափ փայլուն, որ
„ խելմը հեռու տեղէն տեսնըվի աս դռն
„ տին ճառագայթներուն շափը: 10 կամ
„ 15 մղոն աս բլուրին քենարներէն՝ հրա-
„ տարակվի իբրեւ մէկ նուիրեալ տեղմը, և
„ լաւաւ պատով ու փոսերով մէջ առնուն
„ աս տեղըն ու տընկըվի չորս դին Փնարխ
„ ծառեր: Աս բլուրը ան խաչը, աս ծա-
„ ռերը ըլլան մէկ յիշատակարանմը Գերմա-
„ նիայի՝ որուն մէջ օտարներուն մեզմէ մեր
„ սիրելիները. Փնարխ ծառերուն անուա-
„ ու կընըշանակէ թէ գերեզման է երեւի
„ մարդիկներու, և թաղվեցան հոստեղը եր-
„ և երի ճէնէնաւներուն դիցազուններ՝ որ
„ հայրենեաց աղատութեմ ու անկախութե
„ համար ղէնք առած վաղեմէն պատերազ-
„ մը, և արժան է որ այսպիսի փառաւոր
„ մարդիկներուն մարմններ թաղվին մէկ նուր-
„ րեալ երկրիմը մէջ ”:

Ի Դ Ա Լ Ի Ա

Վէպեմէն 3 Հոգեմբերի :

Որովհետեւ մէկ բաղձալի խապարներէն մէկը եղաւ Նաբօլէօնին ճամբորդուելը Եւրպա կղզին, և ամիկներ կողմէն իմանալ տեսնել տեղը, անոր համար կողմէնք հոս մէկ թուղ թիմը համառօտութիւն որ եկաւ Սան Ռաֆէօն ուսկից որ նաւ մըտաւ Նաբօլէօնը : աս թուղթը թէպէտ և գրուած է անկից ապրիլի 28ին 1814, բայց ան ատենական խապարներուն շատուելը պատճառաւ չըզրօլեցաւ դադէթաներուն մէջ, և զիտնալով թէ ճանձրութի չիտար կարգացօղներուն այս պիտի հին խապարը՝ անոր հմը դնենք հոս :

Սան Ռաֆէօ. 28 Ապրիլի 1814 :

„ Պաշտօնատէրները՝ որ զՊօնաբառութիւն Եւրպա կղզին կրտանէին կորնէ՝ ամիկն կարելի ճամբան կրտանեցնէին ծածուկ պահելու ժողովրդներէն ասոր ճամբորդուելը . ես երբոր լսեցի թէ Պօնաբառութիւն Լաք հասեր է, առանց ուշանալու դացի Ֆրէնս՝ սէյրի ընելու համար իրեն նաւ մըտնալու . առաւօտեան սահաթը 10ին հասանք մէկ լօտառեայմը աւրած փրկիւած, և քիչմը անցաւ չանցաւ տեսայ զՊօնաբառութիւն որ նստած մէկ պատու հանիմը առջև կըլսօսէրկոր այլայլած երեսով Պէնթոնսմ Ճէնէնալին հետը : Քիչմը անցաւ վրան, Նաբօլէօնը տեսաւ պատու հանէն որ մէկ նաւմը եկաւ մնաւ անտեղի նաւահանդիսար, անտեղը որչափ ձայն ունենէն պօռալով ըսաւ պատու հանէն, Աս է իմ Քաշէնա . երբոր հիւ մէկը պատասխան չիտնալուն նորէն պօռալով ըսաւ, Էյ մէ ծոգաւ աչ լիկայ աս խաչախօս : Ասկից զատ եկաւ ուրիշ Փոէկաթմը նաւ, և երբոր ցամաք մօտեցանէն՝ աս նաւերուն զօրապետները դուրս ելան ու երկուքը մէկէն դացին Նաբօլէօնին քովը . Պօնաբառութիւն շատ քաղաքավար ու անուշ կերպով լոռնեցաւ զասոնք, և մէկ քանիմը սահաթ անցնէին ետեւ հրաւիրեց ուրիշ մարդիկներալ և ամիկնուն մէկէն ըրաւ փառաւոր սեղանմը . սեղանին վր ինքնալ տես նըլնեցաւ, և հաղթած էր պահապան ըսված գունդի զօրապետի զգեստով, դուրիս պրդալի շափիայմը ու կուրծքն վրայ կախած էր շատ խաչեր ու պատուոյ նշաններ, սեղանէն առաջ ու սեղանէն ետեւ խօսեցաւ զանազան մարդիկներու հետ, երբեմն բարկաւ նստով . շատ մարդիկներու առջևը իրեն բեր նովը ըսաւ, Էյ մարդի Իօէն Բիւլա 15 Էյ որ ուղեմէ չերայի ըլլալ Լաքաւոր Քրանայի ան դաշնադրութի և ան սահմաններով ինչպէս որ քրիստոնէս :

Պօնաբառութիւն չեղին հիմայ . և ետեւէն ըսաւ ես որդիք էի որ զՔրանայի պահէմ ինչպէս որ ես հոս գիտէ և ոչ ինչիւնին իսրգարարութիւնը :

„ Պօնաբառութիւն շատ կըղարմանար թէ ինչպէս բոլոր Քրանայի զինքը կարհամար հէկոր, և ճամբուն մէջ՝ մանաւանդ Ամենիօնէն անցնելու ատեն իմացաւ քիչմը թէ ինչ է եղեր պատճառը, և ոմանք իրեն ըսին թէ Քրանային ազգը երկու բանի համար կատարեն վրադ . մէյմը զինուորապետներ համար, մէյմալ միաբանութիւն իրաւանց համար . Պօնաբառութիւն պատասխան տըլաւ թէ զինուորապետներ հարկաւոր էր առաջ տանելու հմը իմին խորհուրդներս՝ որ մտածեր էի Քրանայի աղէկուելը համար, վերջը պատահամբ եղաւ որ անյաջողութիւն համար մեր գործողութիւններուն՝ պարտաւորութեանք ք զգալի աւելի դօրք ժողովելու . իսկ միաբանութիւն իրաւանց համար որ կրտանէ, ինչ ծանրութիւն որ քաշերենէն անկից՝ ինչմէ ամենին ծածուկ էր . ինչու որ ամիկն բան չէն կրնար իմանալ թաքաւորները :

„ Հատ մէկ բաղձանք կերեցներ իմանալու համար ան ատենական խապարները թէ ինչ կըլարկոր աստիս անդին . երբոր մէկ դադէթայիմը մէջ կարդաց Օթէնօ Ճէնէնալին յորդորանաց թուղթը որ հրատարակեր էր իրեն բանակին մէջ ըսաւ, Օթէնօ Ճէնէնալը զիս կընշարէի որ Էյ զիսցէրէմ էբրն մէկ իտիճ զինուորմը Էյնիւնա պապոյ դաշախ մը . Էյնիւն չեպեսաւ զիս Լօքի ըսված իսմարընի վրայ պապերալին էի խլըլն Գիւլէ, Էյնիւն Գիւլէն Գիւլէն Էյնիւն իտիճ մարդու գործք է : Ետեղացիները հետաքրքրուէն համար եկան Պօնաբառութիւն քովը տեսնալու համար, Պօնաբառութիւն ալ շատ անուշ ու քաղաքավար կերպով խօսեցաւ ասոնց հետ :

„ Երբոր սեղանին ատենը հասանէն ես աս թուղթը զօրղըս ուրիշ մարդիկներով գացի Սան Ռաֆէօ, ու հոնտեղը մըտայ մէկ սանտալին մէջ երթալու սէյրի ընելու համար ան Փոէկաթմը որոնցմով երթարալէտոր Պօնաբառութիւն Եւրպա կղզին . նաուն պզտիկ խուցը՝ որ պատրաստերէն Պօնաբառութիւն համար ինչիւնգի Փոէկաթմին մէջ շատ սիրուն ու վայելուշ կերպով զարդարված էր . կար շատ գիւրքեր դայրանէկվար ու Քրանայի գիւրքեր . ինչիւնգի օֆֆիցիալները որոնց հետը ես կըխօսէիկորնէ ամիկները քաղաքավար մարդիկներ էին, և շատ զարմացրէին Նաբօլէօնին խելացիութիւնը վրայ բայց անոնք ալ մեր հետը կըբամահրէին Պօնաբառութիւն բռնած ճամբան :

„ Իրեկվան սահաթը ութնուկիսուն ըսկըան պատրաստութիւն տեսնալ զէրմ Պօնա

նաբառութիւն նաւ մըտնար ու երթար պիտոր .
 Նէմցէին ձիաւորները դացին ու շարվեցան
 ծովէ դերքին վրայ պատերազմի կարգով . եւ
 նոյն ատենը ըրի չորի մասյ մէկ խայրխմը
 մէջ՝ որ կեցեր էր ան սանտալին մօտիկ՝ որով
 որ Պօնաբառութիւն նաւը տանէին պիտոր ,
 նոյն ատենը՝ որովհետեւ մօլթը կօխեր էր ,
 անոր համար լուսնին ճառագայթները այն
 պէս աղւոր լուսաւորեր էին ծովէ դերքը՝ որ
 կերևնար հեռուն կեցած ինկիլիզի նաւերը
 որ բոլոր առագաստները բացած ու զար-
 դարած անհամար ֆէնէոններով երկաթ բա-
 շէլը միայն մընացեր էր . որչափ որ սէյրճի
 կար ծովէ դերքին վրայ՝ ամենքը սուս բուս
 ուշ կը դնէին կոր եղած դործողութիւնը ,
 նոյն ատենը ուրիշ ձայն չէր լսուէր , եթէ
 ոչ ծովու ալիքներուն ձայնը և թռամբէթա-
 ներուն ձայնը , որ նշան կուտային կոր ճամբայ
 ելալու : Պօնաբառութիւն մտաւ սանտալին մէջ
 ինկիլիզի ֆոէկալթին խաբատանովը , և ամ-
 մէն սէյրճիները տեսան Պօնաբառութիւն է-
 րեսին վրայ սաստիկ այլայլութիւն , եւ որով
 հետեւ շատ մօտիկ էի Պօնաբառութիւն մտած
 սանտալին՝ տեսայ որ երեսը այնչափ դեղին
 ցեր էր՝ որ մարդ կը կարծէր թէ մեծ հիւան-
 դուէնոր որք ելած է : Երբոր սանտալը ցա-
 մաքէն հեռացանէ , դարձաւ դէպ ի սէյրճի
 ճիները ու բարձր ձայնով լսաւ , նաք բարձր
 ով ֆրանսիներ . աս բարեկէն հիշ մէկ մարդ-
 մը ծովէ դերքին վրայէն պատասխան չեալ
 վաւ :

„ Հիտակը ըսելով ով որ Պօնաբառութիւն
 հետը կերթար կոր ընկերուէ ընելու համար ,
 շատ քաղաքավարուէ ու յարդուէ կը վարէին
 անոր հետը , մանաւանդ ինկիլիզները . քե-
 մը ժամանակ վրայ անցաւ ինկիլիզին ֆոէ-
 կալթին նետեցին 21 թօփ իմացընելու Տփր
 թէ Պօնաբառութիւն հասաւ նաւը . սանտալը
 նորէն ցամաք դարձաւ տանելու համար նախ
 երկու ֆրանսիներ ճէնէնալներնալ որ ու-
 ղեցին երթալ Պօնաբառութիւն հետը , մէ-
 կուն անունը էր Պէոթոննո , մէկայիննալ
 Տրուէ . կէս գիշեր ըլլալունպէս ճամբայ ե-
 լաւ ֆոէկալթը երթալու՝ ուրտեղ պիտոր
 հասներնէ : Իրաւ որ մէկ ցաւալի տեսարան
 մընէր աս մարդուս ճամբորդութիւն , առաջ
 որ տէր կըսեպիլէր բոլոր Եւրոպայի , իբրեւ
 մէկ չարագործմը սիւրկիւն եղաւ չարագործ-
 ներուն տեղը . մենք թէ որ նոյն ատենը չիլի-
 շինք ան ամեն նեղուէնները ու տառապանք-
 ները որ հասուց Պօնաբառութիւն Եւրոպայի
 վրայ , անկարելի կը լար որ մէկ ցամաք չե-
 մանայինք մեր սրտին մէջ ասոր վրայ որ այս
 պիտի խայտառակ կերպով ինկաւ իրեն թշնա-
 մներուն ձեռքը ” :

Համառօտած գիտելիք՝ պանապան փերուէց գաղէ-
 լաներէ ժողոված :

— Թօսկանայի տուղայութիւնը յանձնե-
 ցին նորէն Արքիտուղայ ֆերաինանտօին՝
 որ է մէկ եղբայրը Նէմցէի կայսեր . ասիկայ
 սեպտեմբերի 17 գնաց մտաւ իր ժառանգու-
 թեան սահմանները , և անտեղացի ժողո-
 վուրդները՝ փառաւոր հանդէսներով ըն-
 դունեցան իրենց առջի օրինաւոր տէրը :

— Լօռա ֆասթէրէակհհ ինկիլիզի տէրու-
 թեան լիակատար իշխանութիւն ունեցո-
 ղը երբոր Վիեննա հասաւնէ կեցաւ հոն
 տեղը մէկ քանի օրմը , և անկից ետեւ առաւ
 իրեն հետը Մէթթերնիկհին Բրինչիքէն՝ որ
 է Նէմցէին լիակատար իշխանուէ ունեցողը
 ու գնաց դէպ ի Լէհաստան՝ լաւաջ ելա-
 լու համար Մոսկովի կայսեր ու Պոլուշ-
 թիին : — Սիկիլեայի թագուհին Հէթի-
 ձէնտօրֆ ըսված կայսերական զեղը , սեպ-
 տեմբերի 7 ին գիշերը մեռաւ տավայով :

— Ինկիլիզէոպայի մէջ աս վերջի ժամա-
 նակները գըտնըվեցաւ մէկ նոր գիւտմը՝ որ
 շատ ատենէն պէրի ետեւէ էին գտնալու . աս
 գիւտը է որ բեռան առապան առանց ձիի
 քալեցընել կուտան մէկ մեքենայովմը՝ որ կը
 շարժի գոլորշիքի պոռթկումով . աս բե-
 ռան առապանները Լէհտո , Վիսն , Լանքա-
 թէն ու Նէվքասթըլ ըսված հանգերէն քե-
 միւր կը կըրեն . աս առապաններէն մէկը թէ
 որ չափաւորապէս բեռնաւորած ըլլայնէ ,
 աս մեքենայով այնչափ արագ կը քալէ , որ
 մէկ սահաթվան մէջ կըրնայ 10 ինկիլիզի
 միոն ճամբայ ընել . աս դարմանալի մեքենան
 Մօնիկի Մալալին ըսված ինկիլիզի գերքի-
 մը մէջ ըստորագործված է տեղիտեղը ու
 պատկերով ալ ձեւացուցած է :

Ասկից զատ հիմա Լօռտային մէջը կը
 գործածվիկոր նորագիւտ մէկ մոմմախասի-
 մը . ասիկայ կը յարմարցընեն ինչ և իցէ ճրա-
 դի վրայ , և քանի սահաթ որ կուգէ ճրագը
 վառելու այնչափ կը վառի և ժամանակը դա-
 լունպէս ինքերենը կըմարի : Աս մոմմախա-
 սին շատ դիւրութիւն կուտայ անոնց՝ որ կու-
 ղեն տեօշէկին մէջ ալ կարողանէ կմ գիշերը
 գործըմը ընենէ , զերմջուր տանելու ալ
 ըլլայնէ՝ ատենը գալունպէս մէկէն կըմարի :

— Սեպտեմբերի մէջ մէկ քանի կորթիճներ
 մըտան Ճինէվային լճին մէջը լողալու հա-
 մար . ասոնք իսկէլէյն երբոր քիւմը հեռա-
 ցաննէ՝ ջուրին տակէն գտան մէկ նոր տե-
 սակ ոսկորմը . աս ոսկորը է կամէն խոշոր
 ֆիլէրէն մէկուն և կամէն ուրիշ մեծ կենդա-
 նիմը՝ որուն սօյր կորսըված է հիմայ :

Սէզիայի ու Մօռալիայի դաւառները
 կը .

կըշատցընեն կոր ան ստակին դուխը՝ որ գործածվի պիտոր հիւանդներուն ու անկարող մարդիկներուն . աս դաւառներուն իւրաքանչիւր քաղաքը տրվին աս հետեւեալ համեմատութիւն . Պրունա քաղաքը տրվաւ 27 հազար Փիօրին . շրջակայ տեղւոյնքը Պրուննային 8,585 . Զնայիմը 13,221 . Օլմութձը 12,819 . Թորթբաուն 9,348 . Բէրաու 9,301 . Իկլաու 5,585 . Թէսթէնը 2,207 . Հրա տիսըր 920 : Աս ըստակին գումարը մինչև հիմայ եղած է 88,936 , և տահա օրէօր կը շատնայ : — Ինչպէս որ հիսապ եղանակ Սաքսոնիան՝ սկսեալ յունվարի 1 էն 1813 , մինչև յունիս 1814՝ 90 միլիօն Փիօրինի փասքաշեց այրելով , խաղմա ըլլալով ևն ևն . նոյն միջոցին մէջ շատ պարտք ալ ունէր վճարելու որ առեր էր մէկ տեղէն մէկալ տեղէն պատերազմի խարճը տեսնալու համար . աս պարտքը էր 60 միլիօն , ուստի այսպիսի հիւսապին կէօրէ 18 ամսըվան մէջ Սաքսոնիան զէն քաշեց 150 միլիօն Փիօրինի : — Փարէզի օրագրունէ մէջը կըսէ՝ Թէ ֆօնթէնըպօլին մօտիկ եղած լապիւրինթոսին մէջը շատ տեղւանք կըրփորենկոր գըտնալու հմր մէկ խաղնայմը , զէրէմ ինչպէս որ մէկ ծէր մարդմը յայտնեցնէ՝ ան տեղւանքը թաղերէն աս խաղնան երբոր Վարէննը Փրանսայէն ճամբայ ելաւ 14եմը Լուիձի Փրանսըզի թագաւորին հրամանաւ : Աս վերջի օրերը գըտան հողին տակէն մէկ խուրճինէ խուլթիմը որուն մէջ կար շատ բանալեքներ : — Փարէզէ եկած Թուղթերը կըսեն Թէ Պէռուի տուգան՝ որ է հիմակվան Փրանսըզի թագաւորին եղբօրը մէկ տղան պսակվի պիտոր մէկ Մոսկովի Բրինչիքէասայիմը հետ : Ասկից զատ կըպատմեն նաև Թէ հիմակվան Փրանսըզին թագաւորը , իր եղբայրը , ու ուրիշ թագաւորական Բրինչիքէները պարտք ունին 60 միլիօն . Ինկիլէտոսան որ տըվեր էր մեծ մասը աս ըստակին , նմանապէս Փօթթուքէշը որ տարին 300 հազար ֆունքի կուտար՝ բանի որ իրենց ժառանգութենէ պանդխտացերէիննէ , բայց հիմայ ամենևին յանձն չեն առնուրկոր՝ որ Թէլորը վճարէ իրեն պարտքը , նմանապէս ուրիշ Բրինչիքէները : Պօրպօնեան սօլը Թէ որ չվճարէ իրեն պարտքը տէրութիւններուն՝ անոնց առաւտաձեռնութիւնը համար , անատենը պիտոր

վճարէ իրեն պարտքը որ ունի Ինկիլէտոսայի , Գերմանիայի մասնաւոր մարդիկներուն : — Նաթօլէօնին դրած Վէնիթալիայի թագաւորը ունէր չորս հաւ եղբորու ևնի որ սորվեցուցած էին առապայ քաշել , անոր համար Թաթիշ կընէին թագաւորին հանդիսի առապային ու կըտանէին թագաւորը : Աս եղբերունըրը ընծայ տրվին Շվեդի թագաւորութեան յաջորդ Բրինչիքէին : — Ինկիլէտոսայի , Փրանսայի , Գերմանիայի բոլոր զազէթաները կըպատմեն Թէ ամմէն տրուէ երևելիմարդիկներ կուգանկոր դէպ՝ի վրէնհա անտեղը գըտնըվելու հմր ժողովքին տոտեր : — Փրանսային առջի խուլութենէն առաջ , Փրանսան կըբերեր մէկ տարվան մէջ 180 միլիօն արժողէքի ապրանք Սան Տօմինիկօ ըսված կղզին որ է Ամերիգայի մէջ . և Փրանսայէն կըտանէին նոյն կղզին 100 միլիօն արժողէքի ապրանք , աս տանելուն բերելուն ամմէն խարճերը հանելէն ետև շատ բանալ վրան կըվաստրէր Փրանսան . ինչպէս 1790 ին ամմէն խարճերը հանելէն ետև վաստրէցաւ Փրանսան 70 միլիօն՝ միայն վաճառականութի ընելով աս կղզին հետը : — Մէկ քիչմը ժամանակ է որ Ամպուռկ քաղաքին մէջը կըշինվի ու կըծախվիկոր մէկ դազէթայմը՝ որուն անունը կըկոչվի Կէանդ Մոնիլ : Ասոր շրադորը է Բէսաքքօլիուս անունով տէրութեան խորհրդականներէն մէկը . աս դազէթան երկու լեզուով է՝ Նէմցլերէն ու Մոսկովերէն . և ասկից ելած ըստակը որոշված է՝ որ տըրվի պիտոր հիւանդ ու վերաւորված Մոսկովի զինուորներուն . աս վախճանիս համար , հայրենասէր մարդիկներէն այնչափ հողէ ընկերութի գըտեցաւ որ աս դազէթային ամմէն տեսակ խարճը տեսնելէն ետև՝ գըրվեցաւ հիւանդ զինուորները հողալու սընտուկին մէջ 300 հազար ռուպլի , որ կընէ շուրջ 400 հազար ղըշ . աս սընտուկէն զատ կայ մէկ ուրիշ սընտուկմընալ՝ որ մասնաւոր մարդիկները ստակ կըրքնէին՝ հայրենեաց պաշտպանութեը համար վերաւորվածներուն ու անպիտանացածներուն , աս սընտուկէն պօլ պօլ բաժնըվեցաւ հազարաւոր վերաւորված զինուորներու , և մեռած զինուորներուն որբեվարի ազգատոհմին :

Աս գործքս՝ որ է պատմութի հիմակվան ատենիս , տասնըհինկ օրը մէյմը կըտըպվի .
 'Ի ՎԵՆԵՏԻԿ 'Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ :